ԳՅՈՒԼՆԱՐԱ ԶԱՐԳԱՐՅԱՆ
Վ. Դավթյանի անվ. N 149 ավագ դպրոցի ուսուցչուհի
ՀՏԴ 821.19.0

ԳՅՈՒՂԱՇԽԱՐՀԸ ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Բանալի բառեր և արտահայտություններ. ժանր, վիպակ, գյուղաշխարհ, գեղարվեստական միջավայր, հավաքական կերպար, գրական շրջանակ, ազգային պատմություն:

Ключевые слова и выражения: жанр, повесть, сельский мир, художественная среда, литературная среда, национальное государство.

Key words and expressions: genre, short novel, rural ambit, aesthetic realm, literary realm, national state.

1960-ական թթ. հայ արձակագիրների մեջ սկսվեց մի սուր բանավեճ այն հարցի շուրջ, թե գրողի ուշադրության կենտրոնում պիտի քաղաքը լինի՞, թե՞ գյուղը: Մամուլում շատ հոդվածներ տպագրվեցին, որոնցում հիմնական շեշտադրումն այն էր, որ գյուղն ու գյուղացուն անդրադառնալը կարող է ընկալվել հետամնացություն և պահպանողականություն: Գյուղական կյանքի նյութով գրականություն ստեղծելու կողմնակիցները քիչ էին, և այդ քչերից մեկն էլ Հ. Մաթևոսյանն էր, որն էլ հանդես եկավ «Այսպես կոչված գյուղագրության մասին» հոդվածով՝ գրելով. «Չկա գյուղագրություն կամ քաղաքագրություն. կա միայն մարդկային հայացք բնությանն ու աշխարհին»[1]:

Մաթևոսյանը 20-րդ դարի արձակը հարստացրեց «Ահնիձոր» (1961), «Օգոստոս» (1967), «Ծառերը» (1978), «Կանաչ դաշտը» (1978), «Տերը» (1983) ժողովածուներով: Նրա ստեղծագործությունների հիմնական թեման դարձավ գյուղը՝ այնտեղ ապրող մարդու գոյապայքարով, ազգային ու սոցիալական տագնապներով, արդար կեցության ու ազգային գոյի իր փիլիսոփայությամբ, ծմակուտյան ուրույն նկարագրություններբերով: Ժառանգելով Հ. Թումանյանի և Ակ. Բակունցի թողած գրական ավանդները՝ Մաթևոսյանը իր ստեղծագործություններում պատկերեց հին ու նոր հարաբերությունների մեջ հայտնված գյուղը: Տոհմի կանչին ունկնդիր և

[1] Հր. Մաթևոսյան, Այսպես կոչված գյուղագրության մասին, «Գրական թերթ», 1968, 13 սեպտեմբեր:

երկր ջիղը լինելու իրենց կոչմանը հավատարիմ մաթևոսյանական կերպարները դարձան հայ գրականության մնայուն արժեքներ:

Մաթևոսյանն իր էսսեներից մեկում գրում է. «Իմ հերոսներից շատերն իմ հիշողության գյուղից են գալիս, երբեմն էլ կարողանում եմ «զուտ ինձանից» ստեղծել, և այդ ամենը վերաբնակեցման տպավորություն է թողնում: Շատ կուզենայի, որ իմ հովիտը մեծ ու արևոտ լիներ, կուզենայի, որ նրա բնակիչները միայն լավ մարդիկ լինեին և վատերի համար իմ հովտում տեղ չլիներ, որ իմ մարդկանց կյանքը ծաղկեր լավ ժամանակներում, և պատերազմն ու խեղճ թշնամանքը իմ հովիտ խուժելու միջոց չունենային, բայց ստիպված եմ լինել իմ ժամանակի տարեգիրը»[2]:

Հրանտ Մաթևոսյանը սկսեց «Ահնիձոր» ակնարկով, սկսեց մեծ մտահոգություններով, հրատապ հարցադրումներով: Մաթևոսյանը այս ակնարկում իր ասելիքը հեռվից էր բերում. «Այստեղ մարդ է ապրել, այս ձորը եղել է մի բերրի հովիտ, մարդաշատ, ինչպես հայ հողի ցանկացածդ պատառիկը: Նորերի խոփը դեմ էր առնում քարի, հերկվորը հանում էր քարը, և դա քանդակ խաչ էր լինում»: Խորքից բխող նրա ասելիքը բացահայտում էր հինը, իրերի նախկին վիճակը և հուշում, որ այդ վիճակի պահպանման հնարավորությունը բացառված չէ:

Դառնանալով կորցրածի և կորչողի համար՝ Մաթևոսյանը չի իդեալականացնում գյուղը, գյուղական միջավայրն ու գյուղացու կերպարը: Նրա հերոսներից շատերը ծանր ու շատերի համար անընդունելի բնավորություն ունեն (Աղուն, Ռոստոմ), նրանք ծանր կյանքով են ապրում և դժվարացնում են իրենց կողքին ապրող մարդկանց կյանքը: Նրանց կյանքի դառն օրերը շատ-շատ են, ուրախ օրերը՝ քիչ: Նրանք ծանր աշխատանքով են ապրում, բայց նրանց աշխատանքով է ապրում երկիրը: Նրա հերոսները համառ են, չեն կոտրվում և իրենց բաժին հասած ծանր աշխատանքը առաջ տանելով են մեծացնում իրենց երեխաներին, ստեղծում տնտեսություն: Նրանք ծաղրում, հեգնում ու արհամարում են թույլերին, ծույլերին, նվնվացողներին: Մաթևոսյանի հերոսները չեն սիրում նրանց, ովքեր փախչում են գյուղից քաղաք՝ թեթև կյանք փնտրելու՝ անտեր թողնելով հայրական տունը, այգին, իրենց ժառանգությունը: Քայքայվում էր դարերի ավանդույթներով ապրած գյուղը՝ ցավ պատճառել տասնյակ տարիներով այդ ավանդույթներով ապրած գյուղացուն: Մաթևոսյանը ոչ թե դեմ էր գյուղի զարգացմանը, գյուղական աշխատանքի թեթևացմանն ու գյուղում տրակտորի գոյությանը, այլ դեմ էր մարդու և բնության կապի խզմանը, գյուղի քայքայմանը. մարդու և հողի հարաբերության, շփման վերացմանը:

[2] Հր. Մաթևոսյան, Սպիտակ թղթի առջև, Երևան, 2004, էջ 6:

Եթե գյուղ էր մտել մոտոցիկլետը, ձին չպետք է դառնար գյուղացու համար ավելորդ ու անընդունելի, եթե գյուղում երևում էր քաղաքաբնակ «վիթխարի» կինն ու ի ցույց էր դնում իր ճերմակ ներքնաշորը, ապա գեղջկուհին չպիտի դառնար անտանելի ու տգեղ: Մաթևոսյանն ուզում էր, որ իր Ծմակուտը, Անտառամեջը, իր «կանաչ հովիտը», իր երկիրը մնա անաղարտ, մաքուր մի աշխարհ, ուր մարդիկ սիրում են իրար, հոգում են միմյանց մասին, ապրում մի ընտանիքի նման, որ ոչ թե պատմում են իրար մասին, այլ խոսում են իրար ներսից: Մաթևոսյանը գտնում էր, որ այն մարդիկ, ովքեր մոտ են կանգնած բնությանը, ապրում են նրա բարիքներով, բնության նկատմամբ սեր ու հարգանք են տածում, նրանք ունեն յուրօրինակ մտածողություն, և նրանք են բնության պաշտպանն ու պահպանողը. «Դիմացկուն բեռնաձի, աշխատասեր, համեստ և այդ ամենի մեջ՝ գեղեցիկ»- ահա աշխատավոր գյուղացու մաթևոսյանական բնորոշումը:

Բայց Մաթևոսյանը նաև ցավով նշում է, որ այդ հարազատության մեջ օտարություն է մտել. գյուղացիների մեջ էլ օտարներ կան: Այդ օտարներին հողի ուժը չի ձգում. նրանց հարազատ է քաղաքի աղմուկն ու աշխուժությունը: Այսպիսի գյուղացիների դռների վրա մի մեծ կողպեք է կախված, և շան բույնն էլ դատարկ է: Քաղաքը կամաց – կամաց դառնում է գյուղի թշնամին, գյուղը կամաց – կամաց հիվանդանում է օտարներով, իսկ մտահոգիչն այն է, որ այդ հիվանդները տարիքով ջահելներն են՝ ուժեղ, գյուղին ու իրենց ծնողներին պետքական: Գյուղում հին ու նոր սերենդի հակասություն է երևում, և արդեն այդ ցեցը քայքայում է ավագի ու կրտսերի՝ իրար հասկանալու, հարգելու, լսելու դարավոր ավանդույթը:

Նրա «Տերը» վիպակը այս ամենի վկայագիրն է:

Եթե «Մենք ենք մեր սարերը» վիպակի հերոսները աշխարհի ամնեացավոտ հարցերին կարող են պատասխան տալ՝ չհեռանալով Ծմակուտից, ապա «Տերը» վիպակի հերոսները իրենք են Ծմակուտը փոխում: Գյուղացին հեռացել է բնությունից, խորթացել է նրան, դարձել է բնությունը հոշոտող, անհայրենիք, ընչաքաղց և ավերում, ոչնչացնում է այն երկիրը, որի տերն ինքն է: Վիպակի գլխավոր հերոսը՝ Ռոստոմ Մամիկոնյանը, պայքարում է օտարացած այս հերոսների դեմ, բայց նա արդեն մենակ է. նրա կողքին կանգնած յուրային չկա:

Ռոստոմ Մամիկոնյանը Հովիտ գյուղի անտառապահն է: Գյուղի քայքայումը հանգեցրել է նրան, որ գյուղեր են միավորվում, դառնում մեկ տնտեսություն: Նրա հայրենի գյուղն էլ կցել են հարևան գյուղին: Այդ միացումը նախկին և ներկա շատ գյուղացիների մոտ առաջացրել է անհոգի վերաբերմունք քայքայվող գյուղի հանդեպ: Ոչ միայն տներ են լքվում, դռներ են փակվում, այլև հայրենի գյուղը շատերի համար դարձել է սոսկ

ամառանոց, կերուխումի վայր: Գյուղաշխարհի մարդուն լքել է նաև աշխատասիրությունը, իրար հանդեպ ունեցած սիրալիր վերաբերմունքը, երկրի տերը լինելու ցանկությունը: Ահա գյուղի օտարացածներն էլ, արյունակից կամ պարզապես համագյուղացի, աստիճանաբար կյանքից դուրս են մղում երկրի տիրոջը, որովհետև իրենք գողանում էին, ոչնչացնում բնությունը, իսկ նա պաշտպանում էր, հսկում, բռնում գողացողի ձեռքը: Բայց, ցավոք, ժամանակը երկիրը քայքայողների համար էր աշխատում, իսկ Ռոստոմը մենակ էր. նա առաքինի էր, հպարտ, ինքնուրույն, չէր քծնում, չէր վախենում, վիզ չէր ծռում իշխանավորների առաջ, կեղծիքի ու քծնանքի թշնամին էր: Հենց այս որակներն իր մեջ կրող մարդու թշնամին էր ժամանակը, և Ռոստոմը զրկվում է իր պաշտոնից, դուրս է մնում կյանքից:

Վիպակը սկսվում է անտառտնտեսության ղեկավարի համար առանձնատուն կառուցելու խոսակցություններից: Եվ բոլորը գիտեն, որ այդ տան համար փայտանյութ պիտի դառնա «կենդանի կանգնած» անտառը: Ռոստոմի բնութագրմամբ ծառ կտրողը անհայրենիք, անսիրտ, անհոգի, վայրենի մարդ էր: Հովիտը դարձել էր այսպիսի մարդկանց տունը: Վիպակի հերոսը ծառ կտրողի, անտառը ոչնչացնողի թշնամին է ու ուժերի լարումով պայքարում է դրանց դեմ: Նա այն մարդն է, ով նույնիսկ չէր կարողանում փչացող խոտի ափսոսանքը խեղդել իր մեջ: Ռոստոմը երկրի տերն է ու տիրոջ նմա էլ մտածում է ու գործում: Քաղաքում ապրող իր համագյուղացիներին օտար է համարում, որովհետև նրանց համար գյուղը ընդհամենը մառան է: Ռոստոմի արմատներն այս գյուղից չէին, բայց նա ամենաբնիկն էր: Գյուղում արդեն շատացել էին լքված տները, այգիները ավեր էին դարձել, գյուղամեջը ամայի էր, անտառում շատացել էին կտրված ծառերի բները, երիտասարդ ու հաստաբուն ծառերը գերաններ էին դառնում՝ այս կամ այն անարժանի տանիքը ծածկելու համար: Ահա Ռոստոմի ցավը, անհանգստությունը: Վիզ ծռող, սրա-նրա դռանը մի բաժակ օղի խմող անտառապահի կերպարը նա բարձրացրել, հասցրել էր բարձունքին: Նրան չէին կարող կաշառել, կեղծ խոսքերով գրավել, օղի հյուրասիրել ու դրա դիմաց գողանալ: Բայց ազնվության դիմաց նա միայն թշնամություն էր ձեռք բերել, մնացել մենակ: Անգամ նրա քրոջ զավակները նրա դեմ էին դուրս եկել: Ռոստոմի տեսակը գյուղին էլ պետք չէր. նա դարձել էր ծաղրի ու նախատիքի նշանակետ: Բայց Ռոստոմը նահանջողներից չէ. գիտի ինչ է ուզում: Ռոստոմի և նրան թշնամացած համագյուղացիների հարաբերությունները նկարագրելիս Մաթևոսյանը գրում է. «Երկու հայ կռվեցին, թուրքի գործն աջողեց» կամ «Թուրքի առաջ մենք հայ ենք, հայի առաջ էլ ուրեմնս թուրք ենք. մենք պետք է անհատ լինենք»:

Մաթևոսյանի վիպակում «քեռու և քվեր զավակի», «հացի ու պատվի» ժամանակներն անցել են,հիմա գիշատչի նման են իրար նայում քեռին ու քրոջ զավակը: Դաշտում խոտ հնձող, 500 ոչխար պահող հնձվորների ու հովիվների էլ չես հանդիպի: Հիմա գյուղի կենտրոնում իրենց օրը մաշող, օղի և գարեջուր խմող հարբած, թմրած, անմիտ գյուղացիներն են դարձել երկրի տերերը: Սա տագնապի ազդանշան է, որը հնչեցնում է գրողը: Գյուղը մեռնում է, գյուղացին սկսում է ատել իրեն սնող հողը: Բնություն, աշխատասիրություն, հարևանի մասին հոգ տանելու պահանջ ու ցանկություն այլևս չկա. Կա հարբեցող հացթուխ, թիթեղյա վառարանի մեջ իր կարիքները հոգացող ծույլ, գողացող գյուղացի, որն իրեն իրավունք է վերապահել ծաղրել, խանգարել, նախատել երկիր պահող վերջին մոհիկանին: «Անցանք ավերված ցանկապատը, անխնամ այգին, մտանք տուն: Երանի մտած չլինեինք: Տունը լիքը գերեզմանոց էր հիշեցնում: Սեղանի վրա զամբյուղ կար՝ մեջը ձվեր: Հալիվորը թոռների համար քաղաք ղրկելու համար էր հավաքել: Պատին քաղաքաբնակ որդու-հարսի լուսանկարն էր՝ «սիրելի հայրիկին իր զավակներից» մակագրությամբ»:

Գյուղ էր մտել «թշնամական» անհարազատությունը: Եղբայրներն ապրում էին կողք կողքի ու չէին խոսում իրար հետ: «Ով որ ընկերս է՝ ախպերս նա է»,- սա էր դրա պատասխանը: Ամբողջ վիպակում Ռոստոմն իր մասին հոգնակիով էր խոսում՝ մենք լսում ենք, ասում ենք: Արդյո՞ք նա իր մեջ կրում էր նախնիներին՝ Սումբաթ պապին, հին անտառապահ Տիգրան պապին, Սարգսյան ազգին՝բոլորին:

Նա ուզում էր Անդրանիկ զորավար լինել. ժողովրդին իր ետևից տանել ու փրկել շուն թուրքից, այս դեպքում՝ «թուրք» հայից. «Մենք ենք ասում, ուզում ենք Անդրանիկ զորավոր լինել, բայց ոչ ետևներիցս եկող ժողովուրդ ունենք, ոչ էլ առաջներս՝թուրքի թշնամի»: Նա գտնում էր, որ պատերազմը դեռ շարունակվում է, բայց առանց թուրութվանքի: Մարդիկ իրար «ուտում» են, իրար ձեռից փախցնում, անտառից գողանում, պետության ու իր երկրի շահը արհամարհում: Մաթևոսյանի նկարագրած գյուղը դարձել էր անցած-գնացած հիշողությունների սեփականությունը: Գյուղը լքած, գյուղին օտարացած քաղաքաբնակները կամ թոշակի գնալուց հետո էին վերադառնում կամ մեռած ժամանակ: Ծմակուտը կարմիր դրոշակակիր տնտեսությունից դարձել էր գերեզմանոց: Իսկ Ռոստոմը չէր ուզում այդ գերեզմանոցի տերը լինել, մեռածներին հսկել, ուզում էր. «Ծմակուտը Ծմակուտ մնա, ուզում էր օտար-անհայրենիք թզուկի առաջ Ծմակուտի կաղնին քսան մանեթով չծախվեր, ուզում էր Ծմակուտի սարերի արծաթե քուռակը հովտեցի լակողի ձեռը չընկներ, իրենց երեխեքի երկիրը չծախվեր, էգուցվա օրը իրենց ժառանգները հայրենիքից զուրկ չմնային»: Ուզում էր, ու դրա համար էլ նրա թշնամին մեկը չէր, ամբողջ երկիրն էր:

Ռոստոմը այս ամենը իր համար չէր ուզում. նա անժառանգ էր: Երկիրը զավակ ունեցողներինն էր, նրանց երեխաներինը: Ռոստոմի թիկունքը ժողովուրդն էր, բայց այդ ժողովուրդը նրանից թիկունք էր դարձրել, նա բռնել էր բնությունը, գյուղը, երկիրը եկամուտի աղբյուր, հին ջրաղացը առանձնատուն, դարավոր կաղնին շինանյութ դարձնելու ուղին: Ռոստոմը մենակ էր, անզոր էր այս ամենի առաջ: Նրա տեսակը անհետանում էր: Վիպակում նրա անժառանգությունը հենց այս իմաստն ունի: Եվ իր միջավայրից խորթացած Ռոստոմին ոչինչ չէր մնում, քան զայրացած կրկնել իր նախորդների խոսքը. «Աշխարհը շինել եք հաշվապահություն»:

Օգտագործած գրականության ցանկ

1. Հր. Մաթևոսյան, Այսպես կոչված գյուղագրության մասին, «Գրական թերթ» 1968 թիվ, 13 սեպտեմբեր:
2. Հր. Մաթևոսյան, Սպիտակ թղթի առջև, Երևան, 2004, էջ 6:
3. Հր.Մաթևոսյան, Տերը, «Սովետական գրող» հրատ., Երևան 1993:
4. Դավիթ Գասպարյան, Հայ գրականություն, Երևան, 2007:
5. Սարգիս Փանոսյան, Հր. Մաթևոսյանի ստեղծագործությունը, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1984:

Գ. Զարգարյան

Գյուղաշխարհը Հրանտ Մաթևոսյանի ստեղծագործություններում

Ամփոփում

Մաթևոսյանը նորովի ներկայացրեց գյուղաշխարհի մարդու ներաշխարհը, նրա փիլիսոփայական վերլուծություններն ու աշխարհը հասկանալու, գնահատելու, այդտեղ շտկումներ անելու կարողությունները: Հրանտ Մաթևոսյանը հանդես եկավ և՛ նոր ասելիքով, և՛ նոր ոճով: Նրա արձակում հայ գյուղը երևաց ժողովրդի ճակատագրում իմաստային նոր դերով:

Г. Заргарян

Резюме

Матевосян по-новому представил внутренний мир сельского труженика, его философские выводы и умение понять, оценить и внести свои поправки в окружающий мир. Грант Матевосян выступил с новым словом, с новым стилем.

G. Zargaryan

Summary

H. Matevosyan was an Armenian writer, script writer, an outstanding representative of contemporary Armenian fiction. He described peasant's life, inner world, philosophy and outlook anew.